ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/277

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.10.2021թ. թիվ 26/26-1/16195-2021 գրությամբ «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Լճաշենի համայնքապետարանի 28.09.2021թ. գրության հիման վրա 05.10.2021թ. թիվ 26/26-1/16195-2021 գրությամբ նախաձեռնել է «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/277 ընթացակարգի շրջանակներում 01.11.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Լճաշենի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Լճաշենի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.09.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Լճաշեն համայնքի կարիքների համար ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքների նպատակով հայտարարված ՀՀ ԳՄԼԳ ԳՀԱՇՁԲ 21/09-12 ծածկագրով ընթացակարգի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ին 08.09.2021թ.-ին ուղարկվել է ծանուցում՝ սահմանված շամկետում պայմանագիր կնքելու վերաբերյալ: Սակայն վերջինս չի կարողանում իրականացնել գնման ընթացակարգի հրավերով սահմանված աշխատանքները և հրաժարվում է պայմանագրի կնքումից

Պայմանագիրը կկնքվի երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի հետ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/277 ընթացակարգի շրջանակներում 01.11.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/277 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/277 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Լճաշենի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է «ՀՀ ԳՄԼԳ ԳՀԱՇՁԲ 21/09-12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ն անսպասելիորեն՝ չնախատեսված հանգամանքների պատճառով հայտնվել է ֆինանսական ծանր վիճակում, ուստի չի կարող իրականացնել «ՀՀ ԳՄԼԳ ԳՀԱՇՁԲ 21/09-12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված աշխատանքները և հրաժարվում է պայմանագրի կնքումից»:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.10.2021թ. թիվ 26/26-1/16195-2021 գրությունը, Լճաշենի համայնքապետարանի 28.09.2021թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Լճաշենի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է «ՀՀ ԳՄԼԳ ԳՀԱՇՁԲ 21/09-12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

«Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ն անսպասելիորեն՝ չնախատեսված հանգամանքների պատճառով հայտնվել է ֆինանսական ծանր վիճակում, ուստի չի կարող իրականացնել «ՀՀ ԳՄԼԳ ԳՀԱՇՁԲ 21/09-12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված աշխատանքները և հրաժարվում է պայմանագրի կնքումից»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից <u>հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>***:

Ուսումնասիրելով Լճաշենի համայնքապետարանի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի

որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո, Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.10.2021թ. թիվ 26/26-1/16195-2021 գրությամբ «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**